ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԴՈՂՍԻ
ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
ОБЛАСТЬ АРМАВИР
МУНИЦИПАЛИТЕТ
ДОХС

N 93
«02» «10» 2012 թ.

Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի մարզպետ
պրն Ա. Ղահրամանյանին

Հարգարժան պարոն Ղահրամանյան

Ձեզ ենք ներկայացնում Դողս համայնքի ավագանու 2012 թվականի սեպտեմբերի 26-ի թիվ 7 նիստի որոշումները:
Առդիր 7 թերթ:

Դողս համայնքի ղեկավար Մ.Ադամյան

8514-12
03 10 2012

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԴՈՂՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՔՆԻ ԱՎԱԳԱՆԻ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26.09.2012թ. թիվ 27

### ԴՈՂՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 26-Ի ԹԻՎ 7 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասով և « Իրավական ակտերի մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածով.

## Ո Ր Ո Շ Ե Ց

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Դողս գյուղական համայնքի ավագանու 2012 թվականի սեպտեմբերի 26-ի թիվ 7 նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Դողս համայնքի ավագանիներ

1. Արմեն Աղամյան
2. Աբրահամ Գրիգորյան
3. Աշոտ Հարությունյան
4. Էդգար Զաքարյան

Դողս համայնքի ղեկավար Մ. Աղամյան

2012թ. սեպտեմբերի 26
Գ.Դողս

ՀԱՎԵԼՎԱԾ
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Դողս գյուղական
Համայնքի ավագանու 2012 թվականի
Սեպտեմբերի 26-ի թիվ 27 որոշման

# Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Դողս համայնքում 2013 թվականի համար նախատեսված տեղական տուրքերի և վճարների միասնական դրույքաչափերի սահմանման մասին: Զեկուցող՝ Մ.Աղամյան:
2. Դրամական օգնություն հատկացնելու մասին: Զեկուցող՝ Մ.Աղամյան:
3. Դիմումների քննարկում: Զեկուցող՝ Մ.Աղամյան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԴՈՂՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ

26.09.2012թ. թիվ 28-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԴՈՂՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով.

ՈՐՈՇԵՑ

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Դողս գյուղական համայնքի 2013 թվականի համար տեղական տուրքերի և վճարների միասնական դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող 10-րդ օրը:

Դողս համայնքի ավագանիներ

1. Արմեն Աղամյան
2. Աբրահամ Գրիգորյան
3. Աշոտ Հարությունյան
4. Էդգար Զաքարյան

Դողս համայնքի ղեկավար Մ. Աղամյան

2012թ. սեպտեմբերի 26
Գ.Դողս

ՀԱՎԵԼՎԱԾ
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Դողս գյուղական
համայնքի ավագանու 2012 թվականի
նոյեմբերի 26-ի թիվ 28-Ն որոշման

# ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

/ հազար դրամ/

| Հ/Հ | Տեղական Տուրքերի Անվանումը | Օրենքով սահմանված դրույքաչափ | Առաջարկվող դրույքաչափ |
|---|---|---|---|
| 1. | Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան` նոր շենքերի, շինությունների /ներառյալ ոչ հիմնական/ շինարարության /տեղադրման/ թույլտվության համար հիմնական օբյեկտների համար` | | |
| 1/ | Մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում` այգեգործական /ամառանոցային/ տների, ինչպես նաև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող և հասարակական, և արտադրական նշանակության օբյեկտների համար` | 0-15.0 | 2.0 |
| 2/ | Սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար` | | |
| ա. | 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար` | 0-30.0 | 2,5.0 |
| բ. | 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար` | 0-50.0 | 3.0 |
| գ. | 1001 և ավել քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար` | 0-70.0 | 4.0 |
| | Ոչ հիմնական շինությունների տեղադրման համար` | | |
| 3/ | Մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար` | 0-3.0 | 1.0 |
| 4/ | 20 և ավել քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար` | 0-5.0 | 1,5.0 |
| 2. | Համայնքի տարածքում գտնվող օբյեկտները վերակառուցելու, ամրացնելու, արդիականացնելու, վերականգնելու, օբյեկտների արտաքին տեսքը փոփոխող և այլ աշխատանքներ կատարելու թույլտվություն տալու համար | 0-15.0 | 1.50 |
| 3. | Համայնքի տարածքում գտնվող օբյեկտները քանդելու աշխատանքներ սկսելու թույլտվություն տալու համար | 0-5.0 | 1.0 |
| 4. | Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է | | |
| 1/ | Ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար, հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում, յուրաքանչյուր եռամսյակի համար | 0-17.5 | 4.0 |
| 2/ | Ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար, հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում, յուրաքանչյուր եռամսյակի համար | 1.5-17.5 | 3.5 |

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԴՈՂՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26.09. 2012թ. թիվ 29

### ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով .

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Հատկացնել դրամական օգնություն՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Դողս համայնքի ավագանիներ

1. Արմեն Աղամյան
2. Աբրահամ Գրիգորյան
3. Աշոտ Հարությունյան
4. Էդգար Զաքարյան

Դողս համայնքի ղեկավար Մ. Աղամյան

2012թ. սեպտեմբերի 26
Գ.Դողս

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Դողս գյուղական
համայնքի ավագանու 2012 թվականի
Սեպտեմբերի 26-ի թիվ 7 նիստի
թիվ 29 որոշման

## ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Անահիտ Աղամյան՝ 90 / իննսուն/ հազար դրամ, բուժման համար:
2. Արամ Անտոնյան՝ 95 / իննսունհինգ/ հազար դրամ, բուժման համար:
3. Ռաֆիկ Ամիրյան 90 / իննսուն / հազար դրամ, բուժման համար:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԴՈՂՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ

26.09. 2012թ. թիվ 30

## ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 6-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության 2012 թվականի հունիսի 22-ի թիվ 822-N որոշումը.

## ՈՐՈՇԵՑ

1. Մարտունիկ Աղամյանին զիջել սեփականության իրավունքով իրեն պատկանող 0.66 հա 2-րդ կարգի վարելահողի / կոդ՝ 04-038-132-012/ և տնամերձի / կոդ՝ 04-038-020-003/ 2011 և 2012 թվականների համար հաշվարկված հողի հարկի ապառքը, որը կազմում է 47500 / քառասունյոթ հազար հինգ հարյուր / դրամ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Դողս համայնքի ավագանիներ

1. Արմեն Աղամյան

2. Աբրահամ Գրիգորյան

3. Աշոտ Հարությունյան

4 .Էդգար Զաքարյան

Դողս համայնքի ղեկավար Մ. Աղամյան

2012թ. սեպտեմբերի 26
Գ.Դողս